ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ ЛОРИЙСКАЯ ОБЛАСТЬ
МЭРИЯ г. АЛАВЕРДИ
REPUBLIC OF ARMENIA REGION OF LORI
MUNICIPALITY OF ALAVERDI

1702, Ալավերդի, Զ. Անդրանիկի 8Ա
1702, Алаверди, З. Андраника 8А
1702, Alaverdi, Z. Andraniki 8A
☎ (253) 2-41-00
Fax (253) 2-41-00
E-mail: info@alaverdi.am
URL: www.alaverdi.am

№ 157

«02» 03 2011թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. ՔՈՉԱՐՅԱՆԻՆ

Ձեզ է ուղարկվում Ալավերդի համայնքի ավագանու 2011թ. թիվ 8-Ա, թիվ 9-Ա և Ալավերդու քաղաքապետի 2011թ. թիվ 44-Ա, թիվ 45-Ա, թիվ 46-Ա, թիվ 47-Ա, թիվ 48-Ա, թիվ 49-Ա, թիվ 50-Ա, թիվ 51-Ա որոշումները:

Առդիր՝ 11 էջ:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա.Լ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Կատ.՝ Ա. Էվոյան
2-41-02

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

1702, Ալավերդի, Զ. Անդրանիկի 8Ա

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 9-Ա
## ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 28.02.2011թ. ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Ալավերդի համայնքի 2010թ. բյուջեի
կատարման տարեկան հաշվետվությունը
հաստատելու մասին

(Զեկ.՝ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 69 և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածներով

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է՝

Հաստատել Ալավերդի համայնքի 2010թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը

| | |
|---|---|
| եկամուտների գծով | 303151.7 հազ. դրամ |
| ծախսերի գծով | 298114.1 հազ. դրամ |
| բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդ | 10795.9 հազ. դրամ |
| նույն թվում՝ վարչական բյուջեի հավելուրդ | 10198.8 հազ. դրամ |
| ֆոնդային բյուջեի հավելուրդ | 597.1 հազ. դրամ |

Որոշումն ընդունվել է միաձայն.

1. ԱԲԵԼՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
2. ԵՐԻՑՅԱՆ ԿԱՄՈ
3. ԹԱՆԴԻԼՅԱՆ ՀՐԱՉՅԱ
4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՄԻՐԶՈՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ
7. ՍԻՄՈՆՅԱՆ ԿԱՐԵՆ
8. ՎԱՐՈՍՅԱՆ ԿԱՄՈ

ՔԱՂԱՔԱՊԵՏ Ա.Լ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.Վ. ԽԼՈՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

1702, Ալավերդի, Զ. Անդրանիկի 8Ա

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 8-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 28.02.2011թ. ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Ալավերդի համայնքի 2011թ. բյուջեում
փոփոխություն կատարելու մասին
(Զեկ.՝ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով և ելնելով այն հանգամանքից, որ ՀՀ ֆինանսների նախարարության և Ալավերդու քաղաքապետարանի միջև կնքված 26.12.2002թ. N 01-ՎՇ/ 2002 վարկային պայմանագրի համաձայն Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասի 1/3 բնակելի շենքի ամրացման աշխատանքների համար համայնքին տրամադրված վարկի 2011թ. մարման ենթակա հիմնական գումարի և տոկոսավճարների մեջ կատարվել է ճշտում

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ալավերդի համայնքի 2011թ. բյուջեի եկամտային ու ծախսային մասերում կատարել փոփոխություն

1. 2011թ. բյուջեի պահուստային ֆոնդի եռամսյակային բաշխման մեջ կատարել փոփոխություն, այդ թվում՝
   - պահուստային ֆոնդի 4-րդ եռամսյակում նախատեսված գումարներից 5075.0 հազ. դրամ տեղափոխել 1-ին եռամսյակ և 1-ին եռամսյակում նախատեսված գումարներն ավելացնել 5075.0 հազ. դրամով:
   - պահուստային ֆոնդի 4-րդ եռամսյակում նախատեսված գումարներից 125.0 հազ. դրամ տեղափոխել 3-րդ եռամսյակ և 3-րդ եռամսյակում նախատեսված գումարներն ավելացնել 125.0 հազ. դրամով:
2. 2011թ. բյուջեի եկամտային մասի եռամսյակային բաշխման մեջ կատարել փոփոխություն, այդ թվում՝
   - համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 4-րդ եռամսյակում նախատեսված եկամուտներից 5075.0 հազ. դրամ տեղափոխել 1-ին եռամսյակ և 1-ին եռամսյակում գովազդից նախատեսված եկամուտներն ավելացնել 5075.0 հազ. դրամով:
   - համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 4-րդ եռամսյակում նախատեսված եկամուտներից 125.0 հազ. դրամ տեղափոխել 3-րդ եռամսյակ և 3-րդ եռամսյակում գովազդից նախատեսված եկամուտներն ավելացնել 125.0 հազ. դրամով:
3. 2011թ. բյուջեի պահուստային ֆոնդի 1-ին եռամսյակում կատարված ճշտումից հետո ծախսերի համար 1-ին եռամսյակում նախատեսված գումարներից (բաժին 11, խումբ 1, դաս 2, ծրագիր 51, հ/հ 900262577027, հոդված 4891) 5075.0 հազ. դրամ հատկացնել ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ բնագավառի պետական պարտքի գծով գործառնությունների համար նախատեսված ներքին վարկերի տոկոսավճարների

մարման 1-ին եռամսյակի ծախսերին (բաժին 01, խումբ 7, դաս 1, ծրագիր 51, h/h 900262121263, հոդված 4412):

4. 2011թ. բյուջեի պահուստային ֆոնդի 3-րդ եռամսյակում կատարված ճշտումից հետո ծախսերի համար 3-րդ եռամսյակում նախատեսված գումարներից (բաժին 11, խումբ 1, դաս 2, ծրագիր 51, h/h 900262577027, հոդված 4891) 125.0 հազ. դրամ հատկացնել ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ բնագավառի պետական պարտքի գծով գործառնությունների համար նախատեսված ներքին վարկերի տոկոսավճարների մարման 3-րդ եռամսյակի ծախսերին (բաժին 01, խումբ 7, դաս 1, ծրագիր 51, h/h 900262121263, հոդված 4412):
5. Հողի իրացումից մուտքերը (h/h 90265121492) 2011թ. բյուջեի 1-ին եռամսյակում ավելացնել 412.0 հազ. դրամով և ստացված վարկի հիմնական գումարի մարման նպատակով 1-ին եռամսյակում նախատեսված ծախսերը համապատասխանաբար ավելացնել 412.0 հազ. դրամով (բաժին 15, խումբ 20, դաս 1, ծրագիր 52, h/h 900262121255, հոդված 6112):

Որոշումն ընդունվել է միաձայն.

1. ԱԲԵԼՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
2. ԵՐԻՑՅԱՆ ԿԱՄՈ
3. ԹԱՆԴԻԼՅԱՆ ՀՐԱՉՅԱ
4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՄԻՐԶՈՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ
7. ՍԻՄՈՆՅԱՆ ԿԱՐԵՆ
8. ՎԱՐՈՍՅԱՆ ԿԱՄՈ

**ՔԱՂԱՔԱՊԵՏ** **Ա.Լ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ**

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ** **Ա.Վ. ԷՎՈՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹԻՎ 51-Ա

01 մարտի 2011թ.

Վարձակալ ճանաչելու վերաբերյալ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝**

Սանահին Սարահարթի 2/3 շենքի հմ. 39 բնակարանի վարձակալ ճանաչել Արմեն Վասպուրակի Հովսեփյանին:

Հիմք՝ Ա. Հովսեփյանի դիմումը, «Թիվ 2 ԲՇՏ» ՓԲԸ-ի 13.11.2010թ. N 0-40 տեղեկանքը, բնակ. համատիրության համաձայնությունը:

Ա.Լ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ք. Ալավերդի
01.03.2011թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹԻՎ 50-Ա

01 մարտի 2011թ.

Համայնքային սեփականություն ճանաչված ավտոտնակը և նրա զբաղեցրած հողամասը օտարելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 38-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. № 912-Ն որոշման 34-րդ, 47-րդ կետերով և հաշվի առնելով, որ Գեորգի Սուքիասյանը ընդունել է ավտոտնակը և նրա զբաղեցրած հողամասը ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը և վճարել է օրինականացման համար սահմանված վճարները

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասի թիվ 2/7ա-7ա հասցեում կառուցված քաղաքապետի 17.01.2011թ. թիվ 11-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված 69.1 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը 59426 (հիսունինը հազար չորս հարյուր քսանվեց) դրամ և նրա զբաղեցրած 69.1 քմ հողամասը 36485 (երեսունվեց հազար չորս հարյուր ութսունհինգ) դրամ արժեքով ուղղակի վաճառքով օտարել Գեորգի Սուքիասյանին:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ավտոտնակի և հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

Հիմք՝ Քաղաքապետի 14.09.2010թ. թիվ 154-Ա և 17.01.2011թ. թիվ 11-Ա որոշումները, վճարման անդորրագրերը, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը:

Ա.Լ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ք. Ալավերդի
01.03.2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹԻՎ 49-Ա

01 մարտի 2011թ.

Փոստային հասցե տրամադրելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 38-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝**

Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասի թիվ 3/9 շենքի 1-ին հարկում գտնվող 68.16 քմ մակերեսով բացվածքին տրամադրել Սանահին Սարահարթ թիվ 3/9-51 փոստային հասցե:

Հիմք՝ Քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը:

Ա.Լ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ք. Ալավերդի
01.03.2011թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹԻՎ 48-Ա

25 փետրվարի 2011թ.

Փոստային հասցե տրամադրելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 38-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝**

Ալավերդի քաղաքի Սանահին կայարան թաղամասի թիվ 87 հասցեից առանձնացվող 247.6 քմ մակերեսով հողամասին և բնակելի տանը տրամադրել Սանահին կայարան թիվ 87 Ա փոստային հասցե:

Հիմք՝ Քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը:

Ա.Լ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ք. Ալավերդի
25.02.2011թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹԻՎ 47-Ա

23 փետրվարի 2011թ.

Համայնքային սեփականություն ճանաչված
ավտոտնակի բաժնային մասը և նրա
զբաղեցրած հողամասը օտարելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 38-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. № 912-Ն որոշման 34-րդ, 47-րդ կետերով և հաշվի առնելով, որ Արաքսյա և Իրինա Ղարիբյանները ընդունել են համայնքային սեփականություն ճանաչված ավտոտնակի բաժնային մասը և նրա զբաղեցրած հողամասը ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը և վճարել են օրինականացման համար սահմանված վճարները

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝

1. Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասի 3/21-8Ա հասցեում կառուցված՝ քաղաքապետի 21.12.2010թ. թիվ 248-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված 45.95 քմ արտաքին մակերեսով ավտոտնակի բաժնային մասը՝ 39517 (երեսունինը հազար հինգ հարյուր տասնյոթ) դրամ արժեքով և զբաղեցրած 45.95 քմ հողամասը՝ 24262 (քսանչորս հազար երկու հարյուր վաթսուներկու) դրամ արժեքով ուղղակի վաճառքով օտարել զույքի նկատմամբ ժառանգներ հանդիսացող Արաքսյա Ղարիբյանին և Իրինա Ղարիբյանին:
2. Որոշումը ուժի մեջ է մտնում ավտոտնակի բաժնային մասի և զբաղեցրած հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

Հիմք՝ Քաղաքապետի 04.11.2010թ. թիվ 195-Ա և 21.12.2010թ. թիվ 248-Ա որոշումները, վճարման անդորրագրերը, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը:

Ա.Լ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ք. Ալավերդի
23.02.2011թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹԻՎ 46-Ա

23 փետրվարի 2011թ.

Փոստային հասցեներ տրամադրելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 38-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29.12.2005 թ. թիվ 2387-Ն որոշումով

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝**

1. Ալավերդի քաղաքի Կոշաբերդ փողոցի հարավ-արևմտյան մասում գտնվող աղբավայր կառուցելու համար առանձնացվող 4.6 հա տարածքին տրամադրել Կոշաբերդի փողոց թիվ 17 փոստային հասցե:
2. Սայաթ-Նովա 12 շենքի 1-ին հարկում գտնվող «Կարեն» արտ. կոոպերատիվին պատկանող տարածքին կից 20.6 քմ մակերեսով նկուղային ոչ բնակելի տարածքին տրամադրել Սայա-Նովա թիվ 12 շենք թիվ 29 փոստային հասցե:

Հիմք՝ Քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը:

Ա.Լ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ք. Ալավերդի
23.02.2011թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹԻՎ 45-Ա

21 փետրվարի 2011թ.

Բնակելի տան օրինական 265 քմ տնամերձ հողամասին կից ավել օգտագործվող 125.6 քմ հողամասը օրենքի ուժով Սեյրան Գորգինյանի սեփականությունը համարելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 38-րդ հոդվածներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ 50-Ն օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով,ՀՀ կառավարության 12.08.2010թ. № 1004 –Ն որոշումով և հաշվի առնելով, որ նշված հողամասը չի գտնվում ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝

1. Ալավերդի քաղաքի Դեբեդ թաղամասի թիվ 40 հասցեում գտնվող՝Սեյրան Գորգինյանին (ծնված 16.07.1961թ.) ժառանգության իրավունքով պատկանող 265.0 քմ օրինական տնամերձ հողամասում 1968թ.կառուցած բնակելի տանը կից 1995թ. ինքնակամ կառուցված 3.2 քմ մակերեսով նախամուտքը,խոհանոցից 4.2 քմ մակերեսը և հողամասում առանձին կառուցված 16.6 քմ արտաքին մակերեսով խոհանոցը, ինչպես նաև օրինական հողամասին կից ավել օգտագործվող 125.6 քմ մակերեսով սահմանազատված հողամասը օրենքի ուժով համարել Սեյրան Գորգինյանի սեփականությունը՝ որպես սեփական գույք:
2. Նշված սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:

Հիմք՝ Ս. Գորգինյանի դիմումը, անձնագրի պատճեն, ԱԳԿՊԿ Ալավերդու տարածքային ստորաբաժանման ղեկավարի 11.10.2010թ. թիվ ԴԹ-1757 գրությունը, ժառանգության իրավունքի վկայագիրը, «Թիվ 1 ԲԾՏ» ՓԲԸ-ի տեղեկանքը, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը:

Ա.Լ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ք. Ալավերդի
21.02.2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԹԻՎ 44-Ա

21 փետրվարի 2011թ.

Բնակելի տան օրինական 95 քմ հողամասում կառուցված շինությունները օրենքի ուժով սեփական համարելու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 38-րդ հոդվածներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ 50-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 12.08.2010թ. N1004-Ն որոշումով և հաշվի առնելով, որ նշված հողամասը չի գտնվում ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1. Ալավերդի քաղաքի Խուդյակովի թիվ 16ա հասցեում գտնվող Սամվել Վոլոդյայի Օսյանին (ծնված 25.01.1950թ.) սեփականության իրավունքով պատկանող 95 քմ տնամերձ հողամասում բնակելի տան 1-ին հարկում 1986թ. կառուցված 11.9 քմ մակերեսով շինությունը և 37.8 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը օրենքի ուժով համարել Ս. Օսյանի սեփականությունը՝ որպես սեփական գույք:
2. Սույն որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

Հիմք՝ Ս. Օսյանի դիմումը, անձնագրի պատճեն, ԱԳԿՊԿ Ալավերդու տարածքային ստորաբաժանման ղեկավարի 24.12.2010թ. թիվ ԴԹ-2332 գրությունը, «Թիվ 1 ԲՇՏ» ՓԲԸ-ի թիվ 03.02.2011թ. 0-50/01 տեղեկանքը, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջարկությունը:

Ա.ՂՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ք. Ալավերդի
21.02.2011թ.